



56. ԻՐԵՒԹ ՔԱՌՈՒ ՀԵՖԻԱԹԸ

Կըլնի, լիլնի մի մարդ: Էս մարդին մի սուրու ոչխար կունենա: Օրեն մի օր էս մարդը հանգումը քնով կընկնի, կղարթնի, կտենա՝ սուրում աղաբիցը կորել ա: Էդ խեղճ մարդը քառ ա ըլնում:

Ընկնում ա ճամփա դպա իրա սուրուն, սաքի գտնի: Դրան ճամփին մի մարդ ա ուստ դալի, որ արտը վարում էր, կասի: — Բար' աշողում ա' զպեր, իմ ոշխարի սուրուն շե՞ս տեհե՞ դվորը գնաց:

Էս մարդի բախտիցը վար անողն էլ ա քառ ըլնում: Նա հենց իմանում ա, թե էդ սուրու կորցնողը ասում ա. «Ինձ էլ տեղ տու վարեմ»:

Զեռով շանց կտա դպա արտի գլուխը, կասի: — Ա՛յ, հրե ընտեղ անվարել ա, զնա ընդե վարա:

Նա հենց իմանում, թե ասում ա. «Սուրուն դե՛սը զնաց», էդ ճամփեն բռնում ա, դուզ էթում ա, էթում ա էթում, դրուտ որ, իրա սուրուն գտնում ա:

Միտքն ա անում, թե մի ոշխար, յա էծ տանի էն վար անող մարդին, որ ըտենց լավություն արեց, իրա ոշխարը գտավ:

Իրա սուրուի միջին մի պողը կոտրած էծ ա ըլնում, էդ էծը շկում ա, տանում ա վար անողին փեշքաշ. վար անողը հենց իմանում ա՝ ասում ա, ժիմ էծի պողը խի՞ ես կոտրեա, ասում ա: — Ա՛յ շանը՝ մ, զյողը՝ մ, ես ընշի՞ց եմ խարար, ե՞ս որդե, քո՛ւ սուրուն որդե, որ պողը կոտրեի:

Նա՝ հա՛, սա՛ շէ՛: Դրանք ըտենցությունով տալիս են, եքա
կողիվ են անում:

Նոր միտք են անում, ասում են. «Էթանք դպա գեղը, ճամփին
ո՞վ ռաստ զա նրան հարցնենք. թող նա մեր գանգատը լսի, տեսանք՝
ո՞վ ա մեղավոր»:

Եկուան էլ ռազի կըլնեն՝ կէթան: Կէթան, կէթան, կէթան,
կտենան՝ հրես մի ջահել հարս ա գալի. հենց էդ հարսին կհարց-
նեն.— Ա՛յ քիր, զուրբա՛ն, հլա լսի մեր գանգատը, տես՝ որս ենք
մեղավոր, ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան:

Իրենց գանգատը կանեն էս հարսին:

Մրանց բախտիցը էս հարսն էլ ա քառ ըլնում. զու մի ասի զրան
իրա կեսուրը տանիցը դուս ա արե: Հարսն էլ հենց իմանում ա, թե
ասում են. «Էլի գնա ձեր տուն», հարսը կասի. — Զէ՛, ախպեր ջան,
ընշանք կեսուրս շմեռնի, ես էն տունը ոտ շեմ դնի:

Դրանք կտենան, որ սա էլ ա իրանց օրին, մի զադ ա, կթողան
կէթան իրանց բանին:

